ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ 24-Ը ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Ասատուր Վարդանյան, ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Կանադա, 2025 թ. հոկտեմբերի 20-24:

Այցելություններն ընդգրկել են Օտտավա, Վալ դ'Օր, Քվեբեկ, Տորոնտո և Մոնրեալ քաղաքները:

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Միջազգային հանքարդյունաբերության և մետալուրգիայի հայկական ընկերակցության (AIMMS):

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այցի հիմնական նպատակն էր խթանել հայ-կանադական տնտեսական հարաբերությունների խորացումը՝ մասնավորապես հանքարդյունաբերության, կայուն զարգացման և ներդրումային համագործակցության ոլորտներում: Այցի կարևոր բաղադրիչ էր Կանադայի փորձի ուսումնասիրությունը՝ հանքարդյունաբերության բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) չափանիշների, ինչպես նաև ներդրումային և իրավական համակարգերի մասով:

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝

Հիմնական քննարկումները վերաբերեցին հետևյալ ուղղություններին՝ պատասխանատու և կայուն հանքարդյունաբերության սկզբունքների կիրառում, բնապահպանական վերահսկման, վերականգնման և համայնքային ներգրավման համակարգեր, ներդրումային թափանցիկության և ֆինանսական հաշվետվությունների բարձր չափանիշներ, հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառում (CRIRSCO), կրթական համագործակցություն և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, սփյուռքի և մասնավոր հատվածի ներգրավման ուղիներ՝ Հայաստանի հանքարդյունաբերական համակարգի արդիականացման գործում:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հոկտեմբերի 20-ին հանդիպում ունեցա ՀՀ դեսպան Անահիտ Հարությունյանի հետ, որտեղ քննարկվեց հայ-կանադական տնտեսական կապերի զարգացման անհրաժեշտությունը և ոլորտային համագործակցության խորացման ուղիները: ՀՀ դեսպանի ուղեկցությամբ հանդիպում ունեցա նաև Կանադայի Միջազգային առևտրի գծով փոխնախարարի ավագ տեղակալ, Կանադայի՝ առևտրի գծով գլխավոր հանձնակատար Սարա Ուիլշոուի, Կանադայի բնական պաշարների նախարարության Երկրաբանական ծառայության կենտրոնական վարչության գործադիր տնօրեն Ժենևիև Մարկիի և նույն նախարարության Հողերի ու պաշարների տնօրինության Քաղաքականության և տնտեսագիտության վարչության գլխավոր տնօրեն Ամանդա Ուիլսոնի հետ: Տեղի ունեցավ նաև հանդիպում «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտեի» (CRIRSCO) նախագահ Գարթ Քիրքիեմի հետ: Այց կատարվեց հանքարդյունաբերության ոլորտում լաբորատոր ուսումնասիրություններ իրականացնող հաստատություն («CanmetMINING»), որի գլխավոր տնօրեն Մագդի Հաբիբին և մյուս աշխատակիցները հատուկ շրջայցով ներկայացրին իրականացվող աշխատանքները:

Հոկտեմբերի 21-ին այցելեցի Վալ դ'Օրում գտնվող Canadian Malartic հանքավայրը, որը Կանադայի խոշորագույն բաց հանքավայրերից մեկն է: Այցը հնարավորություն տվեց ծանոթանալու անվտանգության, բնապահպանական կառավարման և համայնքային ներգրավվածության առաջադեմ համակարգերին: Այս հանդիպումը հատկապես կարևոր էր՝ դիտարկելու, թե ինչպես են կանադական ընկերությունները համադրում տնտեսական շահն ու բնապահպանական պատասխանատվությունը::

Հոկտեմբերի 22-ին կայացավ հանդիպում Agnico Eagle Mines ընկերության փոխնախագահ Դանիել ՄակՊարեի հետ, որի ընթացքում քննարկվեցին համայնքների հետ աշխատանքի, փոշու վերահսկման և հողի վերականգնման հարցեր:

Հոկտեմբերի 23-ին Տորոնտոյում անցկացվեցին մի շարք հանդիպումներ՝ հանքային իրավունքի մասնագետ Էդեն Օլիվերի հետ՝ իրավական և ներդրումային կառուցվածքների վերաբերյալ, Toronto Stock Exchange-ում՝ Դին ՄակՖերսոնի և Քրեյգ Ուոլդիի հետ՝ ֆինանսական թափանցիկության և ներդրողների վստահության ապահովման շուրջ, Teck Resources ընկերության ներկայացուցիչների հետ՝ շուկայի միտումների և կայունության հաշվետվությունների թեմայով, Հայ գործարարների ասոցիացիայի հետ՝ սփյուռքի ներգրավման և համագործակցության նոր ձևաչափերի շուրջ:

Հոկտեմբերի 24-ին Մոնրեալում հանդիպում կայացավ Հայաստանի պատվավոր հյուպատոս Լևոն Աֆեյանի հետ՝ երկկողմ տնտեսական և կրթական կապերի խորացման նպատակով:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք նախնական պայմանավորվածություններ՝ փորձի փոխանակման և կրթական համագործակցության ոլորտներում: Հատուկ

ուշադրություն դարձվեց մասնագիտական վերապատրաստման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ծրագրերին: Թեև այցի ընթացքում փաստաթուղթ չի ստորագրվել, սակայն կողմերը հաստատել են փոխադարձ պատրաստակամությունը՝ ձևավորելու գործնական համագործակցության շրջանակներ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այցի արդյունքներով ձևավորվեցին մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են հայ-կանադական հարաբերությունների ամրապնդմանը և հանքարդյունաբերության ոլորտում երկարաժամկետ համագործակցության զարգացմանը:

Միաժամանակ նախաձեռնվեց համատեղ վերապատրաստման և մասնագիտական փոխանակման ծրագիր: Այս նախաձեռնությունը կնպաստի գիտելիքի և հմտությունների փոխանցմանը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորմանը:

Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել ներդրումային համագործակցությունը Կանադայի ֆինանսական շուկաների հետ՝ մասնավորապես Toronto Stock Exchange-ի միջոցով, որը կարող է դառնալ ներդրումների ներգրավման և ֆինանսական թափանցիկության բարձրացման արդյունավետ գործիք: Այս ուղղությամբ առաջարկվում է մշակել ներդրումային մեխանիզմներ և նախաձեռնել փոխգործակցության ծրագրեր՝ նպատակ ունենալով ամրապնդել Հայաստանի դիրքը միջազգային հանքարդյունաբերական և ֆինանսական հարթակներում:

Այս առաջարկությունների իրականացումը կնպաստի Հայաստանի հանքարդյունաբերական ոլորտում միջազգային չափանիշների ներդրմանը, բնապահպանական պատասխանատվության բարձրացմանը և երկկողմ տնտեսական հարաբերությունների նոր որակի ձևավորմանը:

10/31/2025

X

ԱՍԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN ASATUR 2308910957

30.10.2025թ.